



**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՆԵՐՔԻՆ ԳՈՐԾԵՐԻ ՆԱԽԱՐԱՐ
ՀՐԱՄԱՆ**

ԹԻՎ 4 -Լ

**ԼԻԱԶՈՐ ՄԱՐՄՆԻ ՌԻՍՈՒՄՆԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹՅՈՒՆՈՒՄ ԴԻՄՈՐԴՆԵՐԻ
ԸՆՏՐՈՒԹՅԱՆ ՄԱՆԴԱՏԱՅԻՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԿԱՐԳԸ
ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Համաձայն «Ոստիկանությունում ծառայության մասին» օրենքի 55-րդ հոդվածի 7.1-ին մասի և Հայաստանի Հանրապետության վարչապետի 2023 թվականի մարտի 14-ի թիվ 270-Լ որոշման 1-ին կետով հաստատված կանոնադրության 19-րդ կետի 20-րդ ենթակետի՝

Հրամայում եմ՝

1. Սահմանել լիազոր մարմնի ուսումնական հաստատությունում դիմորդների ընտրության մանդատային հանձնաժողովի գործունեության կարգը՝ համաձայն հավելվածի:

2. Սույն հրամանն ուժի մեջ է մտնում հրապարակմանը հաջորդող օրվանից:

Հաստատված է Էլեկտրոնային
ստորագրությամբ
05.01.2024թ.

Վահե Ղազարյան

Հավելված

ՀՀ ՆԳ նախարարի հունվարի 05-ի 2024թ.

թիվ 4-Լ հրամանի

Կ Ա Ր Գ

ԼԻԱԶՈՐ ՄԱՐՄՆԻ ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹՅՈՒՆՈՒՄ ԴԻՄՈՐԴՆԵՐԻ
ԸՆՏՐՈՒԹՅԱՆ ՄԱՆԴԱՏԱՅԻՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ

1. Սույն կարգով սահմանվում է Հայաստանի Հանրապետության ներքին գործերի նախարարության (այսուհետ՝ Նախարարություն) ուսումնական հաստատություն՝ Նախարարության կրթահամալիր (այսուհետ՝ Կրթահամալիր) ընդունվելու համար պետական պատվերի շրջանակներում դիմած քաղաքացիների (այսուհետ՝ դիմորդ) ընտրության մանդատային հանձնաժողովի (այսուհետ՝ մանդատային հանձնաժողով) գործունեության կարգը:

2. Կրթահամալիրի դիմորդների ընտրության նպատակով Հայաստանի Հանրապետության ներքին գործերի նախարարի (այսուհետ՝ Նախարար) հրամանով ստեղծվում է Նախարարության հինգ աշխատողներից բաղկացած մանդատային հանձնաժողով:

3. Մանդատային հանձնաժողովի նախագահ է նշանակվում Կրթահամալիրի պետի՝ կադրային աշխատանքները համակարգող տեղակալը կամ նրան փոխարինող անձը, անդամները՝ Նախարարության ռազմավարական պլանավորման, կադրային և իրավաբանական գործառույթներ իրականացնող ստորաբաժանումների աշխատողներից, իսկ մանդատային հանձնաժողովի քարտուղարը՝ Կրթահամալիրի կադրային աշխատանքները համակարգող ստորաբաժանման աշխատողներից:

4. Մանդատային հանձնաժողովի քարտուղարը ղեկավարում է դիմորդների փաստաթղթերի ընդունման, ձևակերպման և ուսումնասիրության նյութերի նախապատրաստման համար Կրթահամալիրի պետի հրամանով կազմավորված աշխատանքային խմբի գործունեությունը և աշխատանքային խմբի կողմից նախապատրաստված, ինչպես նաև ոստիկանության կառուցվածքային և տարածքային ստորաբաժանումներից ստացված ուսումնասիրության նյութերը մանդատային

հանձնաժողովի նիստերի ժամանակ ներկայացնում է մանդատային հանձնաժողովի քննարկմանը:

5. Կրթահամալիրի դիմորդների վերաբերյալ նախապատրաստված ուսումնասիրության նյութերի հիման վրա մանդատային հանձնաժողովի քարտուղարի կողմից ստուգվում է դիմորդների համապատասխանությունը «Ոստիկանությունում ծառայության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 11-րդ, 55-րդ հոդվածների և լիազոր մարմնի ուսումնական հաստատությունում դիմորդների ընդունելության կարգի պահանջներին, մասնավորապես՝

1) դիմորդների տարիքը, նրանց քաղաքացիության և բնակության վայրերի վերաբերյալ տվյալները,

2) արական սեռի դիմորդների՝ պարտադիր զինվորական ծառայություն անցած լինելու (բացառությամբ օրենքով նախատեսված դեպքերի) հանգամանքը և զինվորական շարային ծառայության պիտանելիությունը:

6. Ստուգվում են նաև դիմորդների ուսումնասիրության նյութերում առկա փաստաթղթերի հիման վրա կազմված հետևյալ ցուցակները և դրանց հիմքերը՝

1) ըստ սեռի՝ դիմորդների,

2) ընդունելության ստուգումներից (քննություններից) դրական արդյունքներով մրցույթից դուրս ընդունվելու իրավունք ունեցող՝

ա. զոհված (մահացած) զինծառայողների մինչև 27 տարեկան զավակների, ծնողների, ամուսինների (կանանց),

բ. իրենց ծառայողական պարտականությունների կատարման ժամանակ զոհված (մահացած) ոստիկանության ծառայողների (զինծառայողների) երեխաների,

3) հավասար միավորների դեպքում մրցույթում առավելության իրավունք ունեցող՝

ա. Հայաստանի Հանրապետության պետական պարգևներով (շքանշաններով և մեդալներով) պարգևատրված դիմորդների,

բ. Հայաստանի Հանրապետության պաշտպանության ժամանակ հաշմանդամ դարձած Հայաստանի Հանրապետության պաշտպանության նախարարության, ոստիկանության և ազգային անվտանգության ծառայության ծառայողների երեխաների,

գ. երկկողմանի ծնողազուրկ երեխաների,

դ. իրենց ծառայողական պարտականությունների կատարման ժամանակ հաշմանդամ դարձած ոստիկանության ծառայողների երեխաների,

4) առողջական վիճակի պատճառով ուստիկանությունում ծառայելու համար ոչ պիտանի ճանաչված դիմորդների:

7. Նախապատրաստված ուսումնասիրության նյութերը և ցուցակները ստուգվում են մանդատային հանձնաժողովի քարտուղարի կողմից, որից հետո այդ մասին զեկուցվում է մանդատային հանձնաժողովի նախագահին՝ մանդատային հանձնաժողովի նիստ հրավիրելու համար:

8. Մանդատային հանձնաժողովի նիստի ընթացքում մանդատային հանձնաժողովի քարտուղարի կողմից դիմորդների վերաբերյալ նախապատրաստված նյութերն ու ցուցակները ներկայացվում են մանդատային հանձնաժողովի քննարկմանը:

9. Քննարկման հարցի առանձնահատկություններից ելնելով՝ մանդատային հանձնաժողովի նիստերին կարող են հրավիրվել նաև մասնագետներ, ինչպես նաև՝ դիմորդները: Մանդատային հանձնաժողովի նիստերում որոշումներն ընդունվում են բաց քվեարկությամբ՝ հանձնաժողովի ձայների պարզ մեծամասնությամբ: Հավասար ձայների դեպքում մանդատային հանձնաժողովի նախագահի ձայնը որոշիչ է:

10. Մանդատային հանձնաժողովի քարտուղարը և հրավիրված մասնագետները օգտվում են խորհրդակցական ձայնի իրավունքից:

11. Քննարկման արդյունքում մանդատային հանձնաժողովը յուրաքանչյուր դիմորդի վերաբերյալ ընդունում է հետևյալ որոշումներից մեկը.

1) համապատասխանում է դիմորդին ներկայացվող պահանջներին և կարող է մասնակցել Կրթահամալիրի ընդունելության ստուգումներին (քննություններին),

2) չի համապատասխանում դիմորդին ներկայացվող պահանջներին և չի կարող մասնակցել Կրթահամալիրի ընդունելության ստուգումներին (քննություններին):

12. Մանդատային հանձնաժողովի որոշման հիման վրա Կրթահամալիրի դիմորդը չի կարող մասնակցել ընդունելության ստուգումներին (քննություններին), եթե նա չի համապատասխանում «Ուստիկանությունում ծառայության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 11-րդ հոդվածով սահմանված՝ ուստիկանությունում ծառայության անցնելու համար ներկայացվող պահանջներին:

13. Մանդատային հանձնաժողովի կողմից սույն կարգի 11-րդ կետի 1-ին ենթակետով նախատեսված որոշումն ընդունելուց հետո՝ մինչև Կրթահամալիրի ընդունելության ստուգումները (քննությունները) սկսվելը կամ ստուգումների (քննությունների) ժամանակահատվածում ուսման համար խոչընդոտ հանդիսացող հանգամանքներ ի

հայտ գալու դեպքերում, դիմորդի՝ Կրթահամալիրի ընդունելության ստուգումներին (քննություններին) մասնակցության հարցը լուծվում է Նախարարի որոշմամբ:

14. Մանդատային հանձնաժողովի՝ սույն կարգի 11-րդ կետով նախատեսված որոշումների հիման վրա մանդատային հանձնաժողովի քարտուղարի կողմից կազմվում է մանդատային հանձնաժողովի նիստի արձանագրություն՝ երկու օրինակից, որոնք ստորագրվում են մանդատային հանձնաժողովի նախագահի, անդամների ու քարտուղարի կողմից: Արձանագրության մեկ օրինակը տրամադրվում է ընդունող հանձնաժողովին՝ ընդունելության ստուգումները (քննությունները) կազմակերպելու համար, իսկ մյուս օրինակը հանձնվում է Կրթահամալիրի քարտուղարություն: